Տնայնագործական և արդիւնաբերական մասի դանձիները արդէն լցված են ամէն տեսակ տեղային արտադրութեան նիւթերով։

Արդութեան օրիորդաց դպրոցի ձեռագործի և զարմանազարդ իրերի համար յատկացվից մի առանձին ընդարձակ սենեակ։

Հեռաբրքրական է Ալէքսանդրօպոլի արհեստների արտադրութիւնը։

Ինչպէս անասնաբուծի բակերը, նոյնպէս և Առևտրական դպրոցի սրահները և շէնքերի արտաքինները, մեծ ուշի նախօրհակին լինելով, զարդարվեցին այսօր ծաղիկներով, կանաչներով և գրաշալներով։

Այսօր երեկոյեան հանդէսի կազմակերպիչ յանձնաժողովի նիստն է կայանալու, ուր ի միջի այլոց, պիտի որոշվեն թէ վաղը եկող հիւրերի ընդունելութեան և թէ այլ կարևոր կարգադրութեան հարցերը։

Կաթնատնտեսական կուրսերը անընդհատ շարունակվում են իրանց գործերը և ամբողջ կազմով, այցելուների ներկայութեամբ, պատրաստվում են՝ իւղ, պանիր, շոռ և այլն։

Այսօր Ա. Քալանթար դասախօսեց կաթնատնտեսութիւնից։ Ն. Ա.

ՐԱՖՖԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Մենք ստացանք Սամարայից հետևեալ հեռագիրը, ամսոս 26-ին.

«Այսօր ուղարկվեց Լոնդոն հետևեալ հեռագիրը. «Սիսարհվում ենք մեր մեծ հանճարաւոր գրող Ռաֆֆիի անմոռանալի ամիսի առաջ։ Մի քառորդ դար է անցել նրա ցաւալի վախճանի օրից, բայց երբեք չի անհետանայ նրա ձայնը բազմաշարչար հայ Ժողովրդի սրտում։ Հանգիստ քո ափիմնարին, մեր սիրեցեալ գրող»։

«Սամարայի հայկական գաղութ»

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ

Հայց գաւառից

Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի միջնորդութիւնը՝ երկու ջոկ-ջոկ յօրելեանական յանձնաժողովի անդամներին հաղորդելու մասին՝ եկաւ շատերիս մի քանի բոպէ ուրախութիւն պատճառեալու։

Մենք յոյս ունէինք, որ մեզ զեկավարող մտաւորականները, յանուն լաւ գործի, մոռանալով ամէն ինչ, համերաշխութեան գալով կը սկսեն իրանց խաղաղ պրոպագանդը։ Սակայն ինչպէս մեր հասարակական, հանրական շատ գործերում, նոյնպէս և ներկայ գործում, ուր համերաշխութիւնը առաջին գրաւականը պիտի լինէր, տեսաք իրակա-նութիւնը գալիս է մի ուեղջրդ անդամ ևս ապացուցանելու, որ մեր հայ մտաւորականները դեռ շատ հեռու են գնալու։

«Դպրոցական ֆոնդ, հանդէսի կատարումն էջմիածնում...»,—ասում է «Մշակը» ընդարձակ գնալով, ներկայ մեր ազգային պայմաններում, միակ իրատեսէր Վեհի կարգադրութիւնը։

«Դրական ֆոնդ, հանդէսի կատարումն Թիֆլիսում»,—սկզբում ասում էին օրիզոնականները, երևի անպատրաստի հանրագիտ էջմիածնի կենտրոնատեղիութիւնը, իսկ յետոյ՝ «Եւ գրական և դպրոցական ֆոնդս... ով որին համակրում է առանձին-առանձին նուիրաբերութիւնս...»։

Մեր ազգային ներկայ ոգեձուլ պայմաններում թէ մէկը և թէ միւսը անվիճելիօրէն անհրաժեշտ են, բայց ներկայումս, երբ Վեհի ջանքերով դպրոցական ֆոնդի թոյլատրութիւնը ստացվել է, առաջին նուազ առաջնութիւնը պիտի տալ դպրոցականին և ապագայում մտածել գրականի մասին, այլապէս յանկարծ ոչ մի լաւ արդիւնք չէ ստացվելու։

«Հօրիզոնը» իր փոքն է փչում։ «Մշակը», համակերպվելով Վեհի կարգադրութեանը, շարունակում է իր՝ մի անգամ յանձն առած միասին՝ յօգուտ դպրոցական ֆոնդի։

Բայց ինչ է ասում հայ ուսուցչութիւնը, որ ներկայ դէպքում ամենից շահագրգռվողը, ձայն բարձրացնողը պիտի լինի։ Որովհետև ուսուցչութիւնն է, որ իր սեփական աչքերով տեսնում է ժողովրդի ոգեռութիւնը, նրա կուլտուրական յետամնացութիւնը, հայ դպրոցի անապահովութիւնը, վայելում է ազատագրարարութեան կամայականութիւնը, անհոգութիւնը և այլն։ Բայց նա համարեա լուռ է և անտարբեր հանդիսատեսի դատապարտելի դերումն է, այն ինչ դպրոցական ֆոնդի հարցում հայ ուսուցչութիւնը մեծ դեր ու պարտականութիւն ունի կատարելու։ Նա պիտի լինի ժողովրդի մէջ առաջին շարքերում պրոպագանդա մղողը և իր սուղ միջոցներից նուիրաբերութիւն անելով օրինակ պիտի ծառայէ հասարակութիւններին, այլապէս նա ամենից յանցաւորն է հանդիսանում ներկայ գործում։

Հասարակութեան գիտակցող մասն էլ, կարծես, «թամաշայի» պաշտօնումն է։ Նա էլ շատ քիչ բան է ասել, երևի այն գիտակցութեամբ, որ մեր լրագրականները աւելի լաւ գասել գիտեն և նրանք են, որ կոչված են մտքերը զեկավարելու։

Ինչնիցէ. մեր համեստ կարծիքով՝ գալիս ենք ասելու, որ միակ պատաբեր պայմանը այն կը լինէր, որ մեր յարգելի լրագրաց պատները, իրանց աշխատակիցներով, յանուն մեծ գործի, համակերպվելով ընդ առաջ գնային Վեհի կարգադրութեանը և մեր ազգային անդրանիկ ուսանը—տպագրութեան 400-ամեակի և հայ տառերի 1500-ամեակի ուսանը - համերաշխութեամբ և արժանավայել կերպով տօնելու, այլապէս մեր հակառակ գործելակերպով պատմութեան էջերում մի սև էջ էլ պիտի աւելացնենք։

Մարդասէր Օլգենինի «Անհետացող Հայաստանի» շուրջը դասախօսութեան արդիւնում էջերը պէտք է ամէն մի հայի զգաստացնեն և ամէն բան անդուրեանի մատնելով՝ լուրջ խորհենք մեր «լինել չը լինելու» մասին, այլ ոչ թէ շատ անդամ մեր կազմիչների արդիւնք պատակտուններ առաջ բերենք, ինչպէս ներկայս յուսում։

Նոր-Նախիջևանն իր հեղինակաւոր ձայնով, գիտակցական խոշոր նուիրաբերութեամբ ընդառաջ եկաւ Վեհի ազգային ցանկութեանը, լաւագոյան օրինակ ծառայելով մեւս քաղաքներին։

Հայկական մեծ ուսանողներն էլ պարտակառնուիրեն ունեն իրանց գործելակերպով օրինակ ծառայելու հայ գիւղերին։

Կէս-Զարիքեան

Մեղրի, 10 յունիսի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վրաց ազգանականութեան ընդհանուր ժողովում երկու օր առաջ քննվեց այն հարցը, թէ պէտք է ձեռք բերել այն հողաբաժինները, որ նուիրում է ազգանականութիւնը կովկասեան պոլիտեխնիկումի համար։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը սկզբունքով համաձայնվել է Գօռուայի առաջարկութեան և լիազօրել է իր պարագլխին խորհուրդ տալ գիւաւոր կոմիտէին, որպէսզի սա ընտրվեցիկ յանձնէ հէնց իրանց սարբութիւնների Վերջում ժողովը միաձայն հաստատութիւն է տուել ազգանականան պարագլխի գործադրութիւններին պոլիտեխնիկումի համար հողեր ձեռք բերելու վերաբերութեամբ և լիազօրել է նրան շարունակել սկսված աշխատանքը նոյն ուղղութեամբ։

◆ Ինչպէս պարզվեց, Գօլովինսկի պրոսպեկտի վրա փլված քաղաքային տունը իր վտանգաւոր դրութեամբ մամանգ մասների ուշադրութիւնն էր գրաւել սրանից դեռ 26 տարի առաջ։ Այն ժամանակ այդ չարաբաստիկ տան մէջ գտնվելիս է եղել Նադէժդին իր լուսանկարչատունը։ Մինչև «Կրուժոկի» այդ տունը փոխադրվելը, ստորկանութիւնը առաջարկած է եղել լուսանկարչատան կապարատուին հեռանալ շինութիւնից, օրվանից նա հին է։

◆ Թիֆլիսում փակվեցին ընդհանների և բժիշկների XIII համագումարի սեկցիաների բոլոր ցուցանմանդէսները, բացի մանկավարժական հարցերից, որ կը տեսի մինչև յուլիսի 1-ը։

◆ Երգչուհիներ Բուկէյէն, Գ. Իսաթիսան, իշխ. Գ. Թումանեան, Ա. Էնգիթեան և Ռեարկով դիմել են Թիֆլիսի նահանգապետին խնդրելով հաստատել «Вѣстникъ Знанія» անունով ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպատակն է նպաստել իր անդամների բարոյական, մտաւոր ու ֆիզիկական զարգացմանը Թիֆլիսում և Թիֆլիսի նահանգում։ Ընկերութիւնը իրաւունք ունի կազմակերպել դասախօսութիւններ, սիստեմատիկ կրթական ու պրոֆեսիոնալ դասընթացքներ, լաբորատորիաներ և այլն։

◆ Թիֆլիսի առևտրաթաղիներից Գարագիւլեանը, Թէոդորովը, Զիչինաձէն, Ֆոլը և Զանգերեան դիմել են նահանգապետին՝ խնդրելով թոյլատրել նրանց հիմնել կովկասեան առևտրաթաղիների փոխադարձ օգնող ու խնայողական գանձարկղ։

◆ «Նոր ակտերի» վարչութեան նախաձեռնութեամբ երկի կայացաւ Թիֆլիսի բոլոր ակումբների առաջների խորհուրդների ներկայացուցիչների միացեալ խորհրդակցութիւնը ակումբային կեանքին վերաբերող զանազան հարցերի քննութեան համար։

◆ Թիֆլիսի նահանգում, համաձայն վիճակագրական տեղեկութիւնների, այս տարի բերքը սպասվում է բաւարար։

◆ Թիֆլիսից «Р. Вѣд.»-ին հեռագրում են, որ Քուլայիսի գնեբալ-նահանգապետը միջնորդեց փոխարքայի անձնախնամորդի առաջ աքսորելու Կովկասից մարգանէց արդիւնաբերողների գործատերերի բանտարկեալների գործադրումը կազմակերպողներին։ Գենեբալ Շաուլովը հնարաւոր չը գտաւ բաւարարեցնել այդ միջնորդութիւնը իր իշխանութեամբ և յանձնեց այն է քննութիւն փոխարքայի խորհրդին։

◆ Սիմֆերիզիոլը խնդրամատոյց է եղել Թիֆլիսի նահանգապետին՝ թոյլ տալու հրատարակել ամիսը երկու անգամ «Извѣстія желѣзныхъ дорогъ» անունով մի թերթ։

◆ Լազօրատից մեզ գրում են, որ այդ ուսանում երեխաների մէջ սաստիկ տարածված է փորտարինը, որ զոհեր է տանում։

ՄԱՄՈՒ

Ինչպէս գիտենք, յունիսի 26-ին Լոնդոնում Ռաֆֆիի մահվան 25-ամեակի առիթի մի հանդէս պէտք է կայանար։

Այդ առիթով Պարիզի Pour les peuples